ՀԱՅԵՐԻ ԶՈՐԱԿՈՉՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿ
(1914–1917 թթ.)

ԱՇԽԵՆ ԲԱՍԵՆՑՅԱՆ

Չնայած կարծրատիպային այն մոտեցմանը, թե Հայոց մեծ եղեռնը սկսվել է 1915 թ., պետք է նշել, սակայն, որ թուրքական իշխանությունները հայ բնակչության նկատմամբ այդ հանցավոր քաղաքականությանը սկիզբ դրեցին 1914 թ. օգոստոսի 2-ին, երբ Օսմանյան կայսրությունում զորակոչ հայտարարվեց, որի հետևանքով բանակ զորակոչվեցին նաև հայերը: Հայերի զորակոչի իրականացման եղանակների ուսումնասիրումը կարևոր նշանակություն ունի: Այն, որ զորակոչի ընթացքում հայերի նկատմամբ կատարված բռնությունները, կողոպուտը, օրինախախտումները և, ի վերջո, սպանդն իրականացվել են պետությանն ենթակա օսմանյան բանակի ու ոստիկանության կողմից, ևս մեկ վկայություն է Հայոց մեծ եղեռնի իրականացման գործում թուրքական պետության պատասխանատվության մասին:

Զորահավաքն սկսեց իրականացվել 1914 թ. մայիսի 12-ին ընդունված զորակոչի մասին լրացուցիչ ժամանակավոր օրենքի համաձայն, իսկ հիմնական օրենքն ընդունվել էր 1909 թ. օգոստոսի 7-ին[1]: 15–60 տարեկան հայ տղամարդիկ փուլ առ փուլ զորակոչվեցին բանակ: Սկզբում զորակոչվեցին 20–45 տարեկանները, ապա՝ 15–20 և վերջում 45–60 տարիքային խմբերը: Վերջիններս օգտագործվեցին որպես բեռնակիրներ՝ ռազմական հանդերձանքի փոխադրման համար[2]:

Հատկանշական է, որ մինչև 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և զինվորական ծառայության նոր օրենքի ընդունումն օսմանահպատակ ոչ մահմեդական ժողովուրդները կանոնավոր չէին ծառայում բանակում: Քրիստոնյաների կանոնավոր զինծառայության մասին 1839 և 1856 թթ. ընդունվել էին որոշումներ, որոնք Բարձր դուռը չեղյալ էր հայտարարել քրիստոնյաների ու մահմեդականների շրջանում առաջացած դժգոհության պատճառով[3]: Դրանից ելնելով՝ որոշվեց, որ քրիստոնյաները խարաջի (գլխահարկ) փոխարեն վճարելու էին "բեդել-ի ասքերի" կոչվող զինծառայությունից ազատ-

---

[1] V. N. D a d r i a n. The Armenian Genocide: an Interpretation, Cambridge, 2004, p. 13.

[2] V. N. D a d r i a n. The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, New York, 2008, p. 221.

[3] *Այդ մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Ա ս տ ո ղ ա ն. Հայերն օսմանյան բանակում (XIV դարից մինչև 1918 թ.), Երևան, 2010, էջ 62–63:*

վելու հարկը[4] և զորակոչվելու էին միայն անհրաժեշտության դեպքում՝ բանակի թվաքանակը համալրելու համար[5]:

1909 թ. զինծառայության նոր օրենքի ընդունումից հետո էլ դարեր շարունակ "անվստահելի տարր" համարվող հայերի նկատմամբ, միևնույն է, խտրական վերաբերմունք կար: Բանակում ծառայելու իրավունք ստանալուց հետո էլ նրանք անհավասար պայմաններում էին գտնվում "մահմեդական տարրի" նկատմամբ:

Պատմաբան Վ. Դադրյանի կարծիքով՝ թուրքական իշխանությունները ցեղասպանության ծրագիրն իրականացնելիս կիրառում էին "զոհին ծուղակը գցելու" եղանակը: Այս նպատակին հասնելու համար գործադրվեց չորս միջոց: Այդ միջոցներից մեկի համաձայն՝ զոհ-բնակչության թուլացման ու վերջնական ոչնչացման նպատակով բոլոր առողջ տղամարդկանց զորահավաքի պատրվակով երեք փուլով զորակոչեցին բանակ, և նրանցից շատ քչերին հաջողվեց դիմակայել զանգվածային ոչնչացման մահաբեր միջոցներին[6]:

Թուրքական իշխանությունները, սակայն, հայ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելով չսահմանափակվեցին: Անկախ այն հանգամանքից, որ հայ տղամարդիկ զորակոչվել էին բանակ, իրականացրին նաև "թեքիալիֆ–ի հարպիե" կոչվող պատերազմական տուրքի գանձումը, որի ժամանակ հավաքում էին պարեն, հագուստ, քաշող ուժ, իսկ արժեքի փոխարեն տալիս էին ստացական, որի դիմաց երբեք էլ չէին վճարելու: Պատերազմական տուրքի գանձումն իրականացվում էր ծայրահեղ խստությամբ, ժողովրդի հարստահարությամբ և վերածվել էր պետության կողմից կազմակերպված կողոպուտի ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև՝ արաբական աշխարհում[7]: Կողոպուտի բեռը, սակայն, մեծապես ծանրանում էր հայ ժողովրդի վրա: Ինչ-

---

[4] *Օսմանյան կայսրությունում ոչ մահմեդականները զինվորական ծառայության փոխարեն հարկվում էին 5000 դուրուշով (bedel№i askeriye): Մինչև 1876 թ. հունիսի 10№ի հրամանագրի ընդունումը հարկը տարածվում էր 20–40 տարեկան ոչ մահմեդականների, իսկ հրամանագրի ընդունումից հետո 15–75 տարեկան տղամարդկանց վրա, բացառությամբ հոգևորականների, հիվանդների և անաշխատունակ անձանց: Փոփոխությունը պայմանավորված էր հարկադիր զորակոչիկների վիճակի վատթարացմամբ և պետական գանձարանի եկամուտների նվազմամբ [տե՛ս Ա. Փափազյան. Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839–1915 թթ.), Երևան, 2002, էջ 173–175]:*

[5] *Տե՛ս Ա. Աստոյան. նշվ. աշխ., էջ 59–61:*

[6] V. N. Dadrian. The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, p. 398.

[7] *Տե՛ս Լ. Վարդան. Հարկերը Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններուն մէջ, ԺԵ№Ի դար, հ. Ա, Երեւան, 2004, էջ 412–414:*

պես իրավացիորեն նկատել է Ա-Դօն՝ “բաւական չէր, որ զինւոր էին տարել ընտանիքը ապրեցնող աշխատաւոր ձեռքը, այժմ էլ գալիս էին խլելու նրա կտոր հացը”[8]:

Բացի այն ճնշումներից, որոնք տեղի ունեցան զորահավաքի ու պատերազմական տուրքերի գանձման ժամանակ, հայերի դեմ ձեռնարկվեցին նաև նոր միջոցառումներ: Այսպես, որոշվեց հայերի ձեռքը զենք չտալ. վերահրապարակվեց մի հին օրենք, որով յուրաքանչյուր զորակոչիկ կարող էր ազատվել զինծառայությունից, եթե վճարեր 43 լիրա փրկագին: Թեև այս օրենքը տարածվում էր բոլորի վրա անխտիր, բայց այն կիրառվեց բացառապես հայերի նկատմամբ: Ա-Դօյի կարծիքով՝ սա շատ հարմար որոշում էր թուրքական իշխանությունների համար. մի կողմից հայերը զենքի տակ չէին մտնի, մյուս կողմից՝ կլցվեր պետության դատարկ գանձարանը[9]:

1908 թ. Սահմանադրության վերահռչակումով հաստատվել էր հավասարության սկզբունքը, և, կարծես թե, “բեդել–ի ասքերին” վերացվում էր, սակայն այն զանազան պատրվակներով շարունակվում էր գանձվել: Զորակոչից ազատվելու համար 1914 թ. հայերը վճարեցին երկու, ապա նս հինգ օսմանյան ոսկի հարկ, որը, շուտով ավելանալով, նախ կազմեց 44, ապա հասավ 90 ոսկու[10]: Այն վճարելուց հետո զորակոչային տարիքի տղամարդիկ կրկին ենթարկվում էին հարկը վճարելու պահանջներին և, քանի որ նրանց մեծագույն մասն ի վիճակի չէր վճարել, ստիպված էր զորակոչվել բանակ, իսկ հետագայում ենթարկվել զինաթափման ու ոչնչացման:

Հայոց ցեղասպանության իրականացման ողջ ընթացքը ընդհանրապես կարելի է նմանեցնել առիթներ փնտրելու և դրանց դիմաց հալածանքներ իրականացնելու հարաճուն շղթայի: Ինչպես հայտնի է, երբ 1914 թ. հուլիսին Կարինում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցությունը գումարեց իր 8-րդ ընդհանուր ժողովը, իթթիհատական ներկայացուցիչները շտապեցին այնտեղ և առաջարկեցին Թուրքիայի՝ պատերազմի մեջ մտնելու դեպքում միանալ իրենց, ռուսների դեմ ապստամբեցնել կովկասահայերին՝ նշելով, որ վրացիներն ու կովկասյան թաթարներն արդեն տվել են իրենց համաձայնությունը: Փոխարենը խոստացան ռուսներին հաղթելուց հետո ստեղծել հայկական ինքնավար իշխանություն՝ միավորելով Կարսի շրջանը, Երևանի նահանգը, Գանձակի նահանգի մի մասը, Վանի, Բիթլիսի վիլայեթները և Էրզրումի վիլայեթի մի մասը: Փաստորեն, հայերին “ինքնավարությունը” տրվելու էր նաև այն տարածքներում, որտեղ թուրքական իշխանությունների արհեստական ձգձգումների ու խոչընդոտների պատճառով 1914 թ. հունվարի 26-ի ռուս-թուրքական պայմանագրով նախատեսված հայկական բարենորոգումների իրականացումն անգամ տապալվել էր: Հասկանալով, որ թուրքերի խոստումները բարենորոգումների ձախողումից հետո չեն կա-

---

[8] Ա - Դ օ. Մեծ դէպքերը Վասպուրականում 1914–1915 թւականներին, Երեւան, 1917, էջ 67:

[9] Տե՛ս նույն տեղում, էջ 75:

[10] Լ. Վ ա ր դ ա ն. Հարկերը Օսմանեան եւ Պարսկական կայսրութիւններուն մէջ, ԺԵ№Ի դար, հ. Բ, Պէյրութ, 2012, էջ 264–265:

ղող իրական լինել՝ Դաշնակցությունը հրաժարվեց ընդունել նրանց առաջարկն ու հայտնեց ժողովում արդեն կայացրած որոշումը, որ հայերը թե՛ ռուսական և թե՛ թուրքական պետություններում պետք է կատարեն իրենց քաղաքացիական պարտականությունը[11]: Ահա հենց այս պատասխանն էլ թուրքերի կողմից դավաճանության պատրվակ ծառայեց հայերի դեմ նախապես ծրագրված գործողություններն իրականացնելու համար:

Հարց է ծագում՝ ինչու Առաջին աշխարհամարտի հայտարարումից հետո "անվստահելի" և "դավաճան" համարվող հայերին, միևնույն է, զորակոչեցին օսմանյան բանակ: Արդյո՞ք զորակոչն այն առաջին փուլը չէր, որով սկիզբ էր դրվելու կանխամտածված ցեղասպան քաղաքականությանը: Ասվածի լավագույն վկայությունը հայերի զորակոչի իրականացման եղանակներն են, որոնք ներկայացված են ինչպես օտար վավերագրերում, այնպես էլ՝ ականատես-վերապրողների հուշագրություններում և լույս են սփռում զորակոչի իրականացման ողջ ընթացքի վրա:

Այս մասին Ա-Դօն գրում է, որ զորքն ու ոստիկանական խմբերը դիվային հրահանգներով ցրվեցին գյուղերով: Նրանք, առանց ցուցակի հավաքելով մեծ ու փոքր, ծեր և պատանի, քոռ ու քաչալ, կաղ և հաշմանդամ, մերկ ու թշվառ վիճակի մեջ գտնվող հայ տղամարդկանց, բերին Կոփ և ուղարկեցին անծանոթ կողմեր: Ի նկատի չէին առնվում ո՛չ ընտանեկան դրությունը, ո՛չ էլ ֆիզիկական արատներն ու թերությունները: Զինվորներ էին տարվել, և քաղաքից դուրս ամբողջ օրը բլուրների լանջերին խրամատներ էին փորում մարդիկ, որոնք իրենց չարքաշ աշխատանքով հազիվ էին կարողանում ձեռք բերել օրական մի կտոր չոր հաց բազմանդամ ընտանիքի համար[12]: Վանի գավառի Արճակի շրջանի Սևան գյուղի բնակիչ, վերապրած Պողոս Ավետիսյանը զորահավաքի մասին հայտնում է, որ սկզբում ոստիկանների միջոցով ուղարկում էին գյուղի զորակոչիկների անունները: Ոստիկանները, օրերով մնալով գյուղում, ամեն տեսակ սանձարձակություններ էին գործադրում, զանազան պատրվակներով մտնում էին տները և բռնություններ իրականացնում կանանց նկատմամբ: Պահանջված զորակոչիկի ներկա չլինելու դեպքում ավելի սանձարձակ էին դառնում: Օրեր շարունակ կերուխում էին կազմակերպում գյուղացիների հաշվին, իսկ պահանջներին չենթարկվելու դեպքում՝ ծեծ ու խոշտանգումներ: Զորահավաքի վերջին շրջանում այլևս օրինական փաստաթղթեր չէին պահանջում, այլ մտնում էին գյուղ և աչքի ընկ-

---

[11] Տե՛ս Հ. Տասնապետեան. Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. Ընդհ. Ժողովը (1890–1924), Աթէնք, 1988, էջ 108:

[12] Տե՛ս Ա-Դօ. նշվ. աշխ., էջ 65, տե՛ս նաև Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918 թթ.), ըստ Կայսերական Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի, կազմ. և առաջ.՝ Վ. Ա. Միքայելյանի, Երևան, 2004, № 35, էջ 100:

նողներին հավաքում՝ առանց նայելու տարիքին[13]: Ըստ վերապրած Սեդրակ Ասպատուրյանի՝ Վանի գավառի Ալջավազի գավառակի հայկական գյուղերում զորակոչից խուսափողների փոխարեն պատժում էին ազգականներին: Ամեն տեսակ տանջանքներ էին գործադրում նրանց նկատմամբ, որոնցից շատերը չդիմանալով՝ մահանում էին: Կառավարության հրամանով այրում էին խույս տվողների տները, բռնագրավում ունեցվածքը, ձերբակալում ծնողներին, եղբորը, շատ անգամ՝ կնոջը[14]:

Ոչ միայն զորահավաքից խուսափողների տներն էին այրում, ծեծի ու բռնության ենթարկում նրանց ընտանիքի անդամներին, այլև հալածանքների էին ենթարկում պարզապես զորակոչի հայտարարման պահին տանը չգտնվող զորակոչիկների հարազատներին[15]: Մասնավորապես, Վանի գավառի Թիմարի շրջանի Այյուր գյուղում օգոստոսի զորահավաքի ժամանակ տնից բացակայելու պատճառով վանեցի չավուշ Շերիֆը վեց ոստիկանով այրեց Տումբուզյան Գևորգի, Աբգարյան Սիմոնի, Մաշոյան Եղիշեի, Կիրակոսյան Հարությունի, Մաշոյան Յարիկի և Գալեմճյան Արշակի տները՝ "մեջը եղած-չեղածով հանդերձ"[16]: Լինում էին դեպքեր, երբ շարժական ու անշարժ ունեցվածքը բռնագրավում և դարձնում էին պետական սեփականություն կամ տունը չվառելու դիմաց ոստիկանները կաշառք էին վերցնում[17]: Այսպես, օրինակ՝ Վանի գավառակի Հայոց ձորի Առեղ գյուղի բնակիչ Ղազար Խաչատրյանի տանը չլինելու ժամանակ նրա տունը երկու ոստիկան ցանկացել էին վառել, սակայն հինգ օսմանյան լիրա կաշառք ստանալուց հետո հեռացել էին, հետո եկել էին ուրիշ ոստիկաններ և վառել[18]: "Русские ведомости" *թերթը 1915 թ. ապրիլի 24-ի համարում գրում է, որ Վանի վիլայեթում զորահավաքի պատրվակով այրվում են հայերի գյուղերը, բնակչությունը լիակատար մղձավանջի մեջ է, վանդալիզմը դրսևորվում է ամբողջ թափով[19]:*

Սակայն հայերի զորակոչի իրականացման եղանակները նոր երևույթ չէին Օսմանյան կայսրությունում: Թուրքական վարչակազմը դեռ վաղուց էր ձեռք բերել նման միջոցներ գործադրելու փորձառություն: Խոսքը վերաբերում է XIV դարավերջից XVIII դարի սկիզբն անցկացված դեվշիրմեին, նրան նախորդած և հաջորդած ժամանակաշրջաններում կիրառված նման համակարգերին: Համեմատության համար նշենք, որ ինչպես դեվշիրմեն, այնպես էլ զորակոչն իրականացվել են հպատակ քրիստոնյա բնակ-

---

[13] *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, խմբ.՝ Ա. Վիրաբյան, հ. I, Երևան, 2012, № 62, էջ 106:*

[14] *Նույն տեղում, № 167, էջ 261–262:*

[15] *Տե՛ս նույն տեղում, № 61, էջ 106, № 74, էջ 131:*

[16] *Տե՛ս նույն տեղում, № 64, էջ 117:*

[17] *Տե՛ս նույն տեղում, № 12, էջ 42, № 69, էջ 124:*

[18] *Տե՛ս նույն տեղում, № 90, էջ 153:*

[19] "Русские ведомости" (М.), 24. IV. 1915. *Տե՛ս նաև "Գավառի ձայն" (Ալեքսանդրապոլ), 2. VII. 1915, "Հայաստան" (Սոֆիա), 4. IV. 1915:*

չության դիմադրական ուժը թուլացնելու նպատակով, ծառայել են որպես միջոց մի դեպքում ձուլման, մյուս դեպքում՝ ոչնչացման համար: Երկու դեպքում էլ հավաքին ընդդիմանալու համար կիրառվել են բռնության, զենքի օգտագործման, կողոպտելու, տունն այրելու միջոցները[20]: Ե՛վ զորահավաքը, և՛ դեվշիրմեն իրականացվել են օրինախախտումներով, զորակոչի դեպքում՝ օրենսդրության, դեվշիրմեի դեպքում՝ շարիաթի սկզբունքների կոպիտ խախտումներով, քանի որ թուրքերի կողմից իսլամը որպես պետական կրոն հռչակելուց առաջ քրիստոնեություն ընդունած ժողովրդից, տվյալ դեպքում՝ հայերից, բանակի կարիքների համար տղայաժողով չպետք է կատարվեր[21]: "Ամեն ինչ շարիաթին" և "շարիաթը ամեն ինչին" հարմարեցնելու նախկին եղանակը կիրառվեց նաև 1914 թ. զորահավաքի ժամանակ. տվյալ դեպքում՝ "ամեն ինչ օրենքին" և "օրենքը ամեն ինչին" հարմարեցնելու սկզբունքով: Թե՛ զորակոչից, թե՛ դեվշիրմեից ազատվելը գրեթե անհնարին էր, քանի որ նպատակը պարզապես հավաքագրումը չէր, այլ հպատակ քրիստոնյա ժողովուրդների ներուժը և հնարավոր դիմադրությունը թուլացնելը[22]: Զորակոչի ժամանակ բեդել վճարածներից նորից այդ հարկը պահանջելը ևս նոր երևույթ չէր: Դեվշիրմեի ժամանակ էլ հավաքագրված տղաներին գրանցամատյաններից չէին հանում և շարունակում էին գլխահարկ պահանջել նրանց հայրերից[23]: Երկու դեպքում էլ փախուստի դիմածների հարազատներին դաժանորեն պատժում էին[24]: Հետևաբար, թուրքերի կողմից զորակոչի իրականացման եղանակների կիրառումը հարյուրամյակների փորձ ուներ:

Ինչ վերաբերում է հայ քաղաքական շրջանակների և ընդհանրապես հայ ժողովրդի՝ զորակոչի արձագանքին, ապա, կանխազգալով իշխանությունների խիստ և բիրտ գործողությունների մոտալուտ վտանգը, հայ ժողովուրդն որդեգրեց խոհեմության ու հնազանդության գործելակերպ: Բոլորը համաձայն էին կառավարության պահանջները կատարել, թեկուզ նյութական ու ֆիզիկական զոհողությունների գնով, միայն թե գոյությունը պահպանեին, և փորձանքը հեռանար հայ ժողովրդի գլխից[25]: Կոստանդնուպոլսի և գավառական ազգային ու երեսփոխանական մարմինները, պատրիարքարանը, առաջնորդարանները և այլն, ելնելով նաև Դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողո-

---

[20] *Տե՛ս Մ. Զուլալյան. "Դեվշիրմե"-ն (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների.– ՊԲՀ, Երևան, 1959, № 2–3, էջ 254:*

[21] *Նույն տեղում, էջ 249–250:*

[22] *Տե՛ս Ա. Շաքարյան. "Արյան հարկը" Օսմանյան կայսրությունում. դեվշիրմե, Երևան, 2006, էջ 59–61:*

[23] *Նույն տեղում, էջ 64:*

[24] *Տե՛ս նույն տեղում, էջ 69:*

[25] *Տե՛ս Կ. Սասունի. Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956, էջ 711–712, տե՛ս նաև Լ. Զորմիսեան. Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, հ. Գ (1908–1922), Պէյրութ, 1975, էջ 212–213:*

վի որոշումից, խրախուսում էին քաղաքացիական պարտականության կատարումը: Մասնավորապես, երբ Վանում մեծ թվով հայեր խույս էին տվել զորահավաքից և հաշվառվելու չէին ներկայացել, տեղական կառավարության կողմից զորահավաք հայտարարելուց 3–4 օր անց ժանդարմների մի խումբ էր գնացել Արարք թաղի հրապարակ ու այնտեղ գտնվող բոլոր հայերին տարել կառավարության շենք: Դաշնակցության ներկայացուցիչ Արամ Մանուկյանն այդ միջադեպը հարթելու համար հրավիրել էր մոտ 300 երիտասարդի, նվագել տվել դափ ու զուռնան և ինքն առաջ ընկնելով՝ հանդիսավոր շուքով Այգեստանից շարժվել Քաղաքամեջ՝ կուսակալի տուն: Վերջինս դուրս էր եկել նրանց ընդառաջ և իր շնորհակալությունը հայտնել Արամին՝ ցույց տված օրինակի համար: Բոլոր երիտասարդները հաշվառվել էին, և միջադեպը հարթվել էր[26]:

Զորահավաքի հենց սկզբում հայերի խուսափելու դեպքերը պայմանավորված էին մի քանի հիմնավոր պատճառներով: Նախ, զինծառայությունից ազատվելու համար հարկ վճարած հայերին զորակոչելն օրենքը խախտող կարգադրություն էր: Ավելին, 1909 թ. զինծառայության նոր օրենքի 122-րդ հոդվածի համաձայն՝ զորահավաքի հոչակման թվականից սկսած հարկը չպետք է գանձվեր մինչև խաղաղության հաստատումը[27]: Իրականում զորահավաքի հայտարարումից հետո բազմաթիվ հայ տղամարդիկ թեև արդեն վճարել էին զինծառայությունից ազատվելու հարկը, սակայն, միևնույն է, զորակոչվել էին բանակ: Այս մասին գերմանական մի վավերագիր հայտնում է, որ Երզնկայում ապրող մի զինվոր նշել է. "Ես հիմա 46 տարեկան եմ, սակայն ինձ միևնույն է զորակոչեցին զինվորական ծառայության, չնայած որ ամեն տարի ինձ համար վճարվել է ծառայությունից ազատվելու հարկ..."[28]: Թիմարի Մարմետ գյուղի մի քանի բնակչից 51 լիրա, հինգ ու քառորդ դուրուշ որպես զինվորական հարկ էին հավաքել, սակայն պատերազմի հայտարարումից հետո բոլորին ուղարկել էր Կարին՝ առանց գումարը վերադարձնելու[29]: Իսկ Բիթլիս քաղաքում 500-ից ավելի զորակոչիկ 61-ական օսմանյան լիրա որպես հարկ էին տվել, բայց 25 օր անց նորից ծեծվելով՝ բանակ էին տարվել[30]: Դիարբեքիրում բանտ նետված 1600 անձից գրեթե 680 ամենաերևելին ու մեծահարուստը, որոնք վճարել էին զինվորական ծառայությունից ազատվելու

---

[26] *Տե՛ս Ա - Դ օ. նշվ. աշխ., էջ 71:*

[27] *Զինուորական ծառայութեան նոր օրէնքը, կազմեց՝ Սարգիս Յովհաննէսեան, Կ. Պոլիս, 1914, էջ 59:*

[28] *Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում (1915–1918 թթ.), № 50, էջ 138:*

[29] *Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. I, № 82, էջ 140–141, տե՛ս նաև № 60, էջ 105, № 83, էջ 143, № 147, էջ 238:*

[30] *Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, փաստաթղթերի ժողովածու, խմբ.՝ Ա. Վիրաբյան, հ. II, Երևան, 2012, № 27, էջ 62:*

համար, ձեռնաշղթաներով քշվել էին դեպի Մոսուլի անապատ, և որևէ մեկին բացարձակապես հայտնի չէր նրանց տեղահանության վայրը[31]: Նույն ճակատագրին էր արժանացել նաև Խարբերդում գտնվող 13000 հայ զորակոչիկ[32]: Սա մի կողմից վկայում է՝ զինծառայությունից ազատվելու տուրքի գանձումը նպատակ ուներ լցնել կայսրության գանձարանը, մյուս կողմից ապացուցում է այն հանգամանքը, որ իշխանություններն ամենևին էլ մտադիր չէին զինծառայությունից ազատել հայ տղամարդկանց: Ընդհակառակը, ամեն գնով հարկավոր էր բանակ զորակոչելու պատրվակով հավաքագրել նրանց և ոչնչացնել:

Զինծառայության մասին օրենքի 66-րդ հոդվածի համաձայն՝ զորակոչիկների առաքման պաշտոնյաներին (սպաներ ու ենթասպաներ և հարկ եղած դեպքում նրանց տրամադրված ոստիկաններ) արգելվում էր ճանապարհին զինվորների հանդեպ որևէ "գէշ վարմունք ունենալ"[33]: Ակնհայտ է՝ այս հոդվածը ևս խախտվել է զորակոչի ժամանակ, քանի որ բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ հայ զորակոչված զինվորներին մինչև զորանոց հասնելն էին կոտորում: Մասնավորապես, այս մասին է վկայում Վանում կազմակերպված դիմադրությունը, որն իրականացվել էր այն ժամանակ, երբ իմացել էին զինվոր տանելու պատրվակով հավաքված երիտասարդներին ոստիկանների կողմից սպանելու մասին[34]: Այս փաստը ևս մեկ անգամ ցույց է տալիս, որ զորակոչն ընդամենը պատրվակ էր՝ հայ տղամարդկանց ոչնչացնելու ու այդպիսով մնացյալ բնակչության կոտորածը դյուրին դարձնելու համար:

Նույն օրենքի 144-րդ հոդվածի համաձայն՝ օրենքի հրապարակման թվականից առաջ զինծառայությունից ազատվելու հարկը տվողները պահպանում էին նախորդ օրենքով իրենց ունեցած իրավունքները[35]: Նշենք, որ մինչև 1909 թ. օրենքի հրապարակումը բազմաթիվ հայ տղամարդիկ վճարել էին զինծառայությունից ազատվելու տուրքը և լիովին իրավունք ունեին նոր իրավիճակում զինծառայությունից ազատված լինելու: Մինչդեռ նրանց ևս բռնի միջոցներով զորակոչել էին բանակ: Ընդ որում, 127-րդ - հոդվածի համաձայն՝ եթե հարկը վճարելու թվականից սկսած վեց ամիս չանցած զորահավաք հայտարարվեր, և տղամարդիկ զորակոչվեին, ապա հարկը վճարած զինվորին այն պետք է վերադարձվեր[36]: Պարզ է, որ զորակոչի ժամանակ այս հոդվածը ևս շր-

---

[31] *Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914–1918), աշխատասիրությամբ Արթուր Պեյլերյանի, հ. I, Երևան, 2005, էջ 124:*

[32] L. A. Davis. The Slaughterhouse Province: An American Diplomat's Report on the Armenian Genocide, 1915–1917, New Rochelle, New York, 1989, p. 61; Chr. J. Walker. Armenia: The Survival of a Nation, London, 1980, p. 218.

[33] *Տե՛ս Զինուորական ծառայութեան նոր օրէնքը, էջ 34–35:*

[34] *"Արև" (Աղեքսանդրիա), 11. VI. 1915:*

[35] *Զինուորական ծառայութեան նոր օրէնքը, էջ 63:*

[36] *Նույն տեղում, էջ 60:*

ջանցվել էր, ու զորակոչվածներին հարկն առանց վերադարձնելու էին զորակոչել բանակ:

Սակայն զորակոչվելու նկատմամբ գլխավոր անվստահությունն առաջացավ այն խտրականությունից հետո, երբ թուրքերին ուղարկում էին մոտ վայրերում գտնվող գնդեր ծառայելու, իսկ հայերին՝ հեռու: Նրանցից շատ քչերին էր հաջողվում իրենց բնակավայրին մոտ գտնվող գնդերում հաշվառվել, այն էլ՝ միջնորդությունների շնորհիվ: Հեռավոր վայրերում գնդերի մեջ ընդգրկելու նպատակը հայերին իրենց բնակավայրերից հեռացնելն էր[37]: Մինչդեռ զինծառայության նոր օրենքի 37-րդ հոդվածով ծառայության վայրը վիճակահանությամբ պետք է ընտրվեր, այլ ոչ թե կամայականության սկզբունքով[38]:

Զորահավաքի ժամանակ չի կատարվել նաև զինծառայության օրենքի 64-րդ հոդվածի պահանջը, ըստ որի՝ որոշված օրը զորակոչիկների չներկայանալու պատճառների օրինական ու ոչ օրինական լինել-չլինելը պետք է ստուգվեր համապատասխան հանձնաժողովի կողմից, և առանց օրինական պատճառների չներկայացողների անունները պետք է հանձնվեին քաղաքային իշխանություններին՝ հետապնդելու ու ձերբակալելու համար[39]: Իրականում զորահավաքից խուսափած հայ տղամարդկանց չներկայանալու պատճառները հանձնաժողովում ոչ միայն չէին քննվում, այլև հենց այդ պահին չներկայացողների տներն այրում էին, կտտանքների ենթարկում հարազատներին: Մինչդեռ պետք է հետապնդեին և ձերբակալեին միայն զորակոչից ապօրինի խուսափող տղամարդկանց:

Օրենքի խախտման մասին է վկայում նաև Դերջանի Բազառիճ գյուղից վերապրած Գրիգոր Քեշիշյանը, ով 1914 թ. նոյեմբերին բանտից դուրս գալուց հետո ունեցել է պաշտոնական փաստաթուղթ՝ որպես բանտարկյալ զինծառայությունից ազատված լինելու մասին: Չնայած դրան՝ դեռ անկողնային հիվանդ լինելու ժամանակ թուրքերը պաշարել էին նրա տունը, փաստաթուղթը վառել և նրան էլ հարկադրել էին զինծառայության գնալ[40]: Ընդ որում, հիվանդ լինելը ևս, ըստ օրենքի, զորակոչիկին պետք է առժամանակ ազատեր բանակ զորակոչվելուց: Իսկ նույն գյուղի բնակիչ Գալուստ Նորիկյանի տունը վառել էին՝ պատճառաբանելով, թե փախուստի է դիմել, մինչդեռ նա տարիներ առաջ Ռուսաստան էր գնացել: Որպես ապացույց ցույց էին տվել նրա նամակները, սակայն դրանք ոստիկանները հաշվի չէին առել[41]: Աղբակ գավառի Հասփստան գյուղի ուսուցիչ Վահան Պետրոսյանը հատուկ վկայական է ունեցել, ըստ որի՝ իրեն բանակ չպետք է

---

[37] *Տե՛ս Ա - Դ օ. նշվ. աշխ., էջ 77, տե՛ս նաև Լ. Զ ո ր մ ի ս ե ա ն. նշվ. աշխ., էջ 205:*

[38] *Զինուորական ծառայութեան նոր օրէնքը, էջ 16:*

[39] *Նույն տեղում, էջ 34:*

[40] *Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, խմբ.՝ Ա. Վիրաբյան, հ. III, Երևան, 2012, № 16, էջ 98:*

[41] *Նույն տեղում, էջ 99:*

տանեին: Իսկ դա ընդունված կանոն էր հայ և այլազգի ուսուցիչների համար: Երբ վկայականով նա ներկայացել էր ոստիկանապետին, հուսալով, որ կազատվի զինծառայությունից, ապտակ ստանալուց հետո մեղադրվել էր փախուստի դիմելու փորձի մեջ և բանտարկվել[42]:

Զորահավաքի ժամանակ իրագործված բռնությունների և ապօրինությունների դեմ հայերի կողմից բողոքներ էին ներկայացվել, հայկական նահանգների առաջնորդները Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան էին դիմել, պատրիարքարանն էլ դրանք պատկան մարմիններին էր հայտնել, սակայն ամեն անգամ նույն պատասխանն էին ստացել, թե պատերազմ է, երկիրը վտանգի մեջ է, պատերազմական իրավիճակում նման խստությունները բնական են, խանգարելու փոխարեն առանց տրտունջի ժողովուրդը թող իր պարտականությունը կատարի: Իսկ վերջում էլ՝ թերանալու դեպքում մահվան սպառնալիքներ էին հնչեցրել[43]:

Ինչպես տեսնում ենք, օսմանյան կառավարությունը զորահավաքն իրականացրել էր օրենսդրության կոպիտ խախտումներով, ինչը հայ բնակչության շրջանում արդարացված կասկածներ էր առաջացնում, թե արդյոք զորակոչն իրականացվում է օսմանյան հայրենիքը փրկելու նպատակով: Այս իրողություններից ելնելով՝ բացարձակապես արդարացված չեն այն հայերի դասալքության ու դավաճանության մեղադրանքները, որոնք, լուրջ կասկածներ ունենալով ապօրինի զորահավաքի իրական նպատակների վերաբերյալ, զորակոչից խուսափելու միջոցով էին փորձում փրկել իրենց կյանքը:

Զորահավաքից խուսափելու հաջորդ պատճառն այն էր, որ զորակոչվեցին մարդիկ, ովքեր երբեք զինվորական ծառայության մեջ չէին եղել և զենք կիրառելու կանոններին չէին տիրապետում: Հաջորդ պատճառը, ինչից ելնելով հայերը դժկամորեն էին վերաբերվում զորակոչին, բերքահավաքի շրջանն էր, երբ աշխատող ձեռքեր էին պետք: Հատկանշական է այն, որ կառավարությանն ուղղված Հայոց պատրիարքարանի դիմումի համաձայն՝ դաշտային աշխատանքներ կատարելու համար զորակոչվածների մի մասն առժամանակ ազատ արձակվեց կրկին ներկայանալու պայմանով:

Զորակոչվելուց խուսափելու համար կարճ ժամանակ անց ևս մեկ հիմնավոր պատճառ ծագեց, այն է՝ կոտորածի ենթարկվելու վախը, քանի որ բանակ զորակոչվածները սկզբում, երբ հնարավորություն ունեին, նամակների միջոցով հայտնում էին, թե ինչ վիճակում են եղել հայ զինվորները ու ինչպիսի վախճանի են արժանացել: Ըստ Մուշի գավառակի Շենիկ գյուղի վերապրած Կիրակոս Տեր-Տոնապետի Երիցյանի՝ գյուղացիները բանակ չէին գնում, որովհետև վախենում էին շրջապատող քուրդ աշիրեթներից, որոնցից կառավարությունն ոչ մի զինվոր չէր տարել, և որոնց հետ իրենց հարաբերությունները լավ չէին: Իրենք կառավարությանն ասել էին, որ պետք է աշիրեթներից

---

[42] Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. I, № 265, էջ 408:

[43] Տե՛ս Կ. Մ ա ս ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 710:

էլ զինվոր վերցնի, որպեսզի իրենք ապահով լինեն ու գնան, և վստահեցնի իրենց, որ, եթե զինվոր գնան, ընտանիքներին, գյուղացիներին ոչինչ չի պատահի: Սակայն կառավարությունը հայտնել էր, որ քրդերից զինվոր չի տանելու, իսկ շենիկցիների ապահովության համար ոչինչ չէր արել. դեռ ավելին՝ քրդերին զենքեր էր բաժանել: Դրանից հետո կառավարությունն այլևս զինվոր չէր պահանջել, այլ միայն բեռնակիրներ: Սակայն, երբ վերջիններս փախուստի դիմելուց հետո պատմել էին, թե ինչպես էին սպանել իրենց ընկերներին, շենիկցիներն այլևս բեռնակիր չէին տվել: 1915 թ. ապրիլին կառավարությունը խստությամբ կրկին պահանջել էր բեռնակիրներ, բայց մերժել էին՝ կոտորածից վախենալով: Սասունի շրջանի Սեմալ, Գելիեզուզան, Գեղաշեն, Շուշնամերկ, Տափիկ, Կոփ, Ավկեր, Աղբիկ, Հեթնիկ, Իշխանաձոր, Տալվորիկ գյուղերի ներկայացուցիչները խորհրդակցություն էին գումարել և որոշել՝ "քանի որ կառավարությունը կոտորում է մեր տղամարդկանց, չենք գնում զինվորության, և թող գան մեզ մեր գյուղերում կոտորեն"[44]:

Երկրի ընդհանուր զորահավաքի ժամանակ զեյթունցիները ևս մեծ մասամբ չէին ենթարկվել իշխանությունների՝ ըստ կանչի ներկայանալու պահանջներին: Դեռ Կովկասյան ճակատում ռուս-թուրքական պատերազմի սկսվելուց առաջ Զեյթունի մի քանի երիտասարդներ, խուսափելով զինծառայությունից, Նազարեթ Չավուշի գլխավորությամբ բարձրացել էին լեռներ: Վերջինիս թուրքական իշխանությունները համարում էին ավազակախմբի ղեկավար՝ ավազակապետ[45]: Հանուն ճշմարտության, սակայն, պետք է նշել, որ, Նազարեթ Չավուշին "ավազակապետ", իսկ խմբին "ավազակախումբ" ներկայացնելով՝ թուրքական իշխանություններն այլ նպատակ էին հետապնդում: Լեռներ բարձրացած այս խումբը գործում էր դեռ 1913 թվականից: Ելնելով Զեյթունի կիսանկախ կարգավիճակից և բանակում քրիստոնյաների հանդեպ խտրական վերաբերմունքից՝ նրանք իրենց պարտավոր չէին համարում զինծառայության գնալ: 1914 թ. զորահավաքից որոշ ժամանակ անց հայ զինվորների զինաթափումը քրիստոնյաների շրջանում ընկալվեց որպես հետագա հալածանքների նախաքայլ: Ուստի այս խմբին միացան զինծառայությունից խույս տված այլ քրիստոնյաներ, իսկ բանակում տիրող անմխիթար պայմանների պատճառով՝ նաև մահմեդականներ: Թուրքական իշխանություններն էլ, օգտագործելով հարմար առիթը, այս խմբին ներկայացրին իբրև ավազակախումբ, իսկ Նազարեթ Չավուշին՝ ավազակապետ, որպեսզի նրանց կատարած գործողությունների մեղքը բարդեն Զեյթունի հայ բնակչության վրա և տեղահանեն:

---

[44] *Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. II, № 168, էջ 250, նաև՝* "Кавказское слово" (Тифлис), 5. VI. 1915.

[45] *Տե՛ս* R. Hosfeld. Tod in der Wüste: Der Völkermord an den Armeniern, München, 2015, S. 132.

Ադանայում Գերմանիայի հյուպատոս Օ. Բյուգենը Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմին ուղարկած իր զեկուցագրում նշում է, որ զեյթունցիներից շատերին տարել էին Հալեպ՝ վիլայեթի կենտրոն, և այնտեղ ձերբակալել: Ձերբակալվածների հետ այնքան դաժան էին վարվել, որ նրանցից մեկը ճիպոտահարումից մահացել էր: 1915 թ. գարնանը զեյթունցիները, միևնույն է, չէին վախեցել և, ինչպես նախկինում, հեռու էին մնացել զինծառայությունից[46]: Սակայն, ինչպես պարզվում է 1915 թ. դեկտեմբերի 30-ին "Հորիզոն" թերթում հրատարակված մի հոդվածից, 1915 թ. սկզբներին կառավարությունը զեյթունցիներից պահանջել էր 500 զինվոր, որի փոխարեն ուղարկվել էր ընդամենը 50-ը[47]: Պատմաբան Ք. Ուոքերը ևս նշում է, որ, ի վերջո, 40–50 զեյթունցի էին համաձայնվել գնալ զորանոց. սակայն նրանք չէին զորակոչվել բանակ, այլ տարվել էին Մարաշ ու բանտարկվել[48]: Ընդ որում, ինչպես հայտնում են գերմանական վավերագրերը, Զեյթունի հայերը ցանկացել էին կառավարության հետ փոխզիջման գալ զինծառայությունը տեղում անցնելու համար, բայց կառավարությունը դա չէր ընդունել: Իբրև արդարացում՝ հայերն ասել էին, որ անապահով են զգում իրենց հարևանությամբ ապրող մահմեդական բնակչության առկայությամբ, ուստի չեն կարող թողնել, որ զինծառայության համար պիտանի տղամարդիկ հեռանան: Հայերը հավաստիացրել էին, որ չպետք է մտավախություն ունենալ իրենց որևէ ագրեսիվ գործողության համար, հատկապես հիմա, երբ զենքերը հանձնել են կառավարությանը և գրեթե անպաշտպան են[49]:

Զեյթունի դեպքերի մասին բուլղարական վավերագրերը հայտնում են, որ զորակոչիկներ հավաքելիս հայ բնակչությունն ընդդիմացել էր ռազմական իշխանություններին, զինված հարձակվել բանտի վրա, որտեղ ձերբակալված էին եղել հայեր. սպանել էին պահակախմբին և ազատել բանտարկյալներին: Մարաշից եկած զորքին ու ժանդարմներին դիմավորել էին տներից արձակված հրաձգությամբ, նահանջել Զեյթունից դուրս գտնվող վանք և ամրացել: Այնտեղ ուղարկվել էր զորք և հրետանի: Թուրքերը Զեյթունում մեծ անկարգություններ էին կատարել[50]: Հալեպում Գերմանիայի հյուպա-

---

[46] *Տե՛ս* Геноцид армян: официальные документы из германских архивов, публикуемые впервые. Вольфганг и Зигрид Густы (составители сборника документов). Под ред., с пред. и прим. д. и. н., проф. С. Степаняна. Ереван, 2005, с. 66; *տե՛ս նաև "Արև", 11. VI. 1915:*

[47] *"Հորիզոն" (Թիֆլիս), 30. XII. 1915:*

[48] Chr. J. Walker. *Նշվ. աշխ., էջ 204:*

[49] *Տե՛ս* Геноцид армян: официальные документы из германских архивов, публикуемые впервые, с. 66.

[50] *Հայոց ցեղասպանությունը Թուրքիայում բուլղարական դիվանագիտական փաստաթղթերի լույսի ներքո, թարգմանությունը՝ Զ. Մ. Ղասաբյանի, Կ. Հ. Ճինգոզյանի, Երևան, 1996, էջ 11, տե՛ս նաև* M. Hesemann. Völkermord an den Armeniern (mit unveröffentlichten

տոս Վ. Ռյոսլերի հաղորդմամբ՝ Զեյթունի տեղական հրամանատարն անբավարար ուժերով էր պաշարել վանքը և չէր կարողացել բռնել վանքում ամրացածներին: Նա պետք է սպասեր հրետանու հասնելուն կամ էլ պաշարման միջոցով սովամահ աներ նրանց: Սակայն հրամայել էր Մարաշի ոստիկանության հրամանատար Սուլեյմանին գրոհել վանքի գլխավոր դռան ուղղությամբ. վերջինս գնդակահարվել էր մի քանի զինվորների հետ: Ի վերջո, թույլ էին տվել, որ վանքում պաշարվածները, որոնց թիվը հասնում էր 150-ի, "ճեղքեն" պաշարումը և հեռանան լեռներ[51]: Դա էլ արվել էր միտումնավոր՝ տեղահանությունը հեշտ կազմակերպելու համար:

Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հ. Վանգենհայմին ուղղված Ադանայի հյուպատոսի զեկուցագրում նաև նշվում է, որ զինծառայությունից և հարկեր վճարելուց հրաժարվելն եզակի երևույթ չէր Օսմանյան կայսրությունում: Դա հանդիպում էր ամենուր: Լազիստանի ու Քրդստանի որոշ ցեղեր և իրենց համար մեկուսի ապրող արաբներն ու չերքեզները հարկեր հիմնականում չէին վճարում և զինծառայության չէին գնում: Իսկ զինծառայության հանդեպ վախը համընդհանուր էր, այնպես որ ինչպես քրիստոնյաները, մահմեդականներն էլ ինչ-որ կերպ փորձում էին դրանից ազատվել[52]:

Այդուհանդերձ, հայերը հնարավորինս կատարել են իրենց քաղաքացիական պարտականությունը: Մասնավորապես, Վանի գավառի Գավաշի շրջանի 20 հայկական գյուղի 720 զորակոչիկ հայտարարությունը ստանալուց 24 ժամ հետո կազմ ու պատրաստ ներկայացել էին Ոստանի շրջանի կառավարությանը: Անունները ստուգելուց հետո առանց ոստիկանի կամ զորքի հսկողության դիոլ-զուռնայով գնացել էին Վան: Իսկ թուրքերն ոչ թե 24 ժամից, այլ նույնիսկ 24 օրից էին հազիվհազ բարեհաճել կառավարության կոչին պատասխանել՝ նշելով, որ դաշտային աշխատանքներ կատարելու պատճառով ժամանակ չունեն ներկայանալու[53]: 1915 թ. ապրիլին Գավաշի շրջանում կայմակամը դարձյալ հայտարարություն էր տվել 15–60 տարեկաններին՝ իբրև զորակոչիկների, 24 ժամում իրենց ինքնապաշտպանության զենքերով ներկայանալ կառավարական կենտրոն՝ Ոստան: Նույնաբովանդակ հայտարարություն էր արվել նաև Կարճկանի շրջանի հայկական գյուղերում: Տղամարդիկ ներկայանալուց հետո սպանվել էին ոստիկանների կողմից[54]:

Dokumenten aus dem Geheimarchiv des Vatikans über das größte Verbrechen des Ersten Weltkriegs), München, 2015, S. 166–167.

[51] R. Hosfeld. *Նշվ. աշխ., էջ 133–134:*

[52] *Տե՛ս* Геноцид армян: официальные документы из германских архивов, публикуемые впервые, с. 66.

[53] *Տե՛ս Հայոց ցեղասպանությունը Օսմանյան Թուրքիայում, վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հ. I, № 198, էջ 319:*

[54] *Տե՛ս նույն տեղում, էջ 323:*

Սկզբնական շրջանում հայերի մեծ մասը բանվորական գումարտակներ զորակոչվելու մեջ ոչինչ չէր կասկածել, քանի որ կառավարությունը հավաքում էր նաև թուրքերին ու քրդերին: Վերջիններս հայերի բանտարկությունից հետո բաց էին թողնվել և նրանց հրաման էր տրվել զբաղվել "գյավուրների" ոչնչացմամբ[55]:

Վերոհիշյալ փաստերը վկայում են, որ Մեծ եղեռնի իրագործման առաջին փուլը պետք է համարել օսմանյան բանակ հայ տղամարդկանց զորակոչն ու ոչնչացումը, ինչը սկսվեց Օսմանյան կայսրությունում զորակոչի հայտարարումով:

Վ. Դադրյանը, համեմատելով Հայոց մեծ եղեռնը և Հոլոքոստը, նշում է, որ ցեղասպանությունը պահանջում էր ոչ միայն ժամանակին ընդունված որոշումներ, այլև՝ գործողությունների արդյունավետություն: Որպեսզի գործողությունները հարթ ընթանային, անհրաժեշտ էր հրամանների և վերահսկողության համակարգի ապահովում: Նպատակը նվազագույն ծախսերով զոհերի առավելագույն ոչնչացմանը հասնելն էր: Սա խնդիր էր, որի իրականացման համար զինվորականների հմտություններ էին անհրաժեշտ: Երկու ցեղասպանության դեպքում էլ զինվորականները վճռորոշ դեր էին խաղացել: Ներգրավված էին ոչ թե սովորական սպաներ, այլ այնպիսիք, որոնք տոգորված էին "նացիզմի և պանթյուրքիզմի" գաղափարախոսությամբ ու նպատակներով, հետևում էին գաղտնիությանը և կարգապահությանը, մասնակցում դաշտային ռազմական գործողություններին՝ միաժամանակ ղեկավարելով մարդասպանների խմբավորումները: Ըստ նրա՝ այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են "նացիստական սպաներ" և "իթթիհատական սպաներ", լիովին վկայում են ապագա մահաբեր գործընթացի մասին, որի իրականացման համար պատրաստել էին հատուկ սպաներ, ներարկել կուսակցական գաղափարախոսություն, ամբողջությամբ կամ մասնակի քաղաքականացրել զինվորականներին: Եվ այս առումով պատերազմը տալիս էր լավագույն հնարավորությունը՝ թաքնվելու զինվորականների քաղաքական իշխանության տակ և նրանց օգտագործելու որպես ցեղասպանության գործիք[56]:

Ուշագրավ է, որ հայ զինվորների զինաթափումից և ոչնչացումից հետո էլ օսմանյան կառավարությունը ձգտել է հայ տղամարդկանց վերջին բեկորներն անգամ ոչնչացնել՝ Միջագետքի անապատներ տարագրված հայությունից կրկին հավաքագրելով զինվորներ: Դեռ 1915 թ. աշնանը Բաղդադի երկաթգծի շինարարության վրա աշխատող հայ ինժեներներին, ծառայողներին և բանվորներին, որոնք արդեն արտաքսվել էին, կրկին հավաքագրել էին բանակի նպատակների համար[57]: Իսկ 1917 թ. կեսերին կատարված մարդահամարով Ռաքքա տեղահանված հայերից 15–60 տարեկան 600 հայի

---

[55] "Кавказское слово", 29. IV. 1915.

[56] *Տե՛ս* V. N. D a d r i a n. The History of the Armenian Genocide: Ethnic Conflict from the Balkans to Anatolia to the Caucasus, pp. 397–398.

[57] *Տե՛ս Գերմանիան և Հայաստանը 1914–1918, դիվանագիտական փաստաթղթերի ժողովածու, հրատ. և ներած. դոկ. Յոհաննես Լեփսիուսի, հ. I, Երևան, 2006, № 210, էջ 357:*

զինվորագրել էին բանվորական աշխատանքի[58]: Հարկ է նշել, որ օսմանյան վեցերորդ բանակը, որը պատրաստվում էր Միջագետքում դիմագրավելու անգլիական ուժերին, աշխատուժի կարիք ուներ՝ ճանապարհների կառուցման և այլ գործերի համար: Վեցերորդ բանակին կից աշխատանքային գումարտակ կազմելու փորձին հակադրվելու համար գավառապետ Զեքին 600 հայից ոմանց ձերբակալել էր, տեղահանել և նույնիսկ՝ սպանել[59]: Եթե նկատի ունենանք Արևմտյան Հայաստանում ռուսական զորքի նոր հաղթանակները, թուրքերի տարածքային կորուստները և Միջագետքում կուտակված հայության վերջին բեկորների հնարավոր վերադարձը հայրենի բնակավայրեր, ապա հասկանալի է դառնում թուրքական կողմի անհանգստության ու բանակի կարիքների համար հայերի հավաքագրման շարժառիթը: Նույնիսկ թուրքական հյուպատոսությունները Գերմանական կայսրությունում ապրող մեծ թվով զորակոչային տարիքի թուրքահայերից պահանջել էին ներկայանալ Կոստանդնուպոլիս, թեև նրանց մեծ մասը վճարել էր բանակից ազատվելու հարկը: Գերմանական փաստաթղթերից մեկում նշվում է. "Կասկածից վեր է, որ փաստորեն հայերը Թուրքիայում պետք է վերցվեն ոչ թե բանակում ծառայության, այլ ընդամենը ուղարկվելու են երկրի խորքերը ճանապարհաշինական աշխատանքներում նրանց օգտագործելու պատրվակով, որտեղ նրանց նախկին փորձի համաձայն գրեթե բոլորին առանց բացառության սպանելու են …"[60]:

Այսպիսով՝ բազմաթիվ օրինախախտումներով ու չարաշահումներով իրականացված, 1914–1917 թթ. շարունակական բնույթ կրած զորահավաքն ընդամենը գործիք էր հայերի պաշտպանունակ ուժն ոչնչացնելու և մնացյալ բնակչության կոտորածը դյուրին դարձնելու համար: Զորակոչի ողջ ընթացքում օրինախախտումները, կողոպուտը, բռնությունները, սպանդը իրականացնելիս մեծ դերակատարում են ունեցել թուրքական ոստիկանությունն ու բանակը: Հաշվի առնելով այն, որ ոճրագործություններն իրականացվել են թուրքական կառավարության նշված ուժային կառույցների միջոցով, ուստի ցեղասպան գործողությունների ողջ պատասխանատվությունն ընկնում է թուրքական պետության վրա:

---

[58] *Կ. Գաբիկեան. Եղեռնապատում Փոքուն Հայոց եւ նորին մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Անթիլիաս, 2006, էջ 519–520:*

[59] *Տե՛ս Թ. Աքչամ. Երիտթուրքերի գործած ոճիրը մարդկության դեմ. Հայոց ցեղասպանությունը և էթնիկ զտումները Օսմանյան կայսրությունում, Երևան, 2015, էջ 350:*

[60] *Հայոց ցեղասպանությունը Գերմանիայի դիվանագետների հաղորդագրություններում, № 46, էջ 131:*

ПРИЗЫВ АРМЯН В ОСМАНСКУЮ АРМИЮ
(1914–1917 гг.)

АШХЕН БАСЕНЦЯН

Р е з ю м е

В 1914–1917 гг. в Османской империи целью призыва на военную службу армян было уничтожение обороноспособной силы, чтобы после этого сравнительно легко истребить также остальную часть армянского населения. Об этом свидетельствуют методы осуществления призыва. Османские власти поставили перед собой задачу призвать и уничтожить армянских мужчин всеми возможными способами. Их уничтожение осуществлялось сопровождающими их жандармами и солдатами. Полевые работы, неумение пользоваться оружием, нарушение закона о призыве, страх уничтожения были объективными причинами, по которым армяне пытались избежать призыва. Тем не менее, по сравнению с турками и курдами, армяне, в целом, подчинялись призыву и по возможности выполняли свои обязанности в османской армии.

THE CONSCRIPTION OF ARMENIANS TO THE OTTOMAN ARMY
(1914–1917)

ASHKHEN BASENTSYAN

S u m m a r y

In the years of 1914–1917 the purpose of conscription to the military service of the Armenians in the Ottoman Empire was the destruction of the defensive force, so as to destroy the rest of the Armenian population in a relatively easier way. This is evidenced by the methods of implementing the conscription. The Ottoman authorities set for themselves the task of recruiting and destroying Armenian men by all possible means. Their destruction was carried out by the gendarmes and soldiers, who accompanied them. The fieldworks, inability to use weapons, violation of the law on conscription, fear of destruction were objective reasons for Armenians to try to avoid conscription. However, in comparison with Turks and Kurds, Armenians were generally subordinated to the conscription and whenever possible fulfilled their duties in the Ottoman army.